ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Փգիշտիի 1

№ 647-Ա « 09 » փետրվարի 2026 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 19-Ի
Հ.4707-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի 1.1-ին կետով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 27.10.2025 թվականի եզրակացությունը և քաղաքացու դիմումը.

1. Երևանի քաղաքապետի 2009 թվականի մայիսի 19-ի «Նոր Արեշի 35-րդ փողոցի հ.95/1 բնակելի տանը կից հողամասի և շենք-շինությունների նկատմամբ Ժենյա Նիկոլի Մխիթարյանի գույքային իրավունքները վերականգնելու, 267.0քմ. մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» հ.4707-Ա որոշման /այուսուհետ Որոշում/ մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) Որոշումը լրացնել նոր՝ 1.1 կետով հետևյալ բովանդակությամբ.

«1.1 Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 10.09.2024 թվականի հ.204-Ն որոշումով հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը, Երևան քաղաքի Նոր Արեշի 35-րդ փողոցի հ.95/1 հասցեի հողամասի գործառնական նշանակությունը սահմանել բնակելի կառուցապատման:».

2) Որոշման նախաբանում՝ «1074.5» թվերը փոխարինել «999.57» թվերով, իսկ «567.0» թվերը՝ «492.07» թվերով.

3) Որոշման վերնագրում, նախաբանում և 2-րդ կետում՝ «267.0» թվերը փոխարինել «192.07» թվերով.

4) Որոշման 3-րդ կետում՝ «աշխատակազմի իրավաբանական վարչության պետին» բառերը փոխարինել «աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետին» բառերով:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին, կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ